ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«28» մարտի 2025 թ. N 59-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 30-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը և հաշվի առնելով «Ինստրուկտարիում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի ապրիլի 15-ի N INSO24-25 գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի մարտի 10-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառման ծրագրի հաստատման և կրեդիտների շնորհման մասին» N 30-Ա հրամանում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) նախաբանում «10.1-ին հոդվածի» բառերից հետո լրացնել «3-րդ մասի» բառերը,
2) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հաստատել «Ինստրուկտարիում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2025 թվականի փետրվարի 10-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացված՝

քաղաքաշինության բնագավառում նախատեսվող շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող «Մեքենամեխանիզմների տեղակայման և շահագործման պահանջները շինհրապարակներում» միջոցառման ծրագիրը և ծրագրին շնորհել առաջին կարգի համար 20 կրեդիտ, երկրորդ կարգի համար՝ 15 կրեդիտ, իսկ երրորդ կարգի համար՝ 10 կրեդիտ:

3) 1-ին կետից հետո լրացնել նոր՝ 1.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հաստատել «Մեքենամեխանիզմների տեղակայման և շահագործման պահանջները շինհրապարակներում» միջոցառման իրականացման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված միջոցառման կազմակերպչին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

28.04.2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի

2025 թվականի մարտի 28 -ի N59-Ա հրամանի

Հավելված
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2025 թվականի մարտի 10-ի N 30-Ա հրամանի

«Մեքենամեխանիզմների տեղակայման և շահագործման պահանջները շինհրապարակներում»

միջոցառման ժամանակացույց

Հ/Հ	Ամսաթիվ	Ժամ	Թեմայի անվանում	Դասախոսի անուն և ազգանուն	Դասընթացների անցկացման ձևաչափը և վայրը	Միջոցառման կրեդիտները	Հավաստագրման ենթակա համապատասխան մասնագիտությունը	Մասնակցության վճարի չափը
1	2	3	4	5	6	7	8	9
1	Մարտի 10 Ապրիլի 10	18.30 11.00	«Մեքենամեխանիզմների տեղակայման և շահագործման պահանջները շինհրապարակներում»	Գեորգի Կակոյան	«Ինստրուկտարիում» ՍՊԸ, Արցախի փ.6/5	Ի-ին կարգի մասնագետին շնորհվելու է 20 կրեդիտ, II-րդ կարգի մասնագետին շնորհվելու է 15 կերդիտ, III-րդ կարգի մասնագետին շնորհվելու է 10 կրեդիտ	I կարգի մասնագետ, II կարգի մասնագետ, III կարգի մասնագետ 01-25, 31-32 մասնագիտություններ	Ի-ին կարգի մասնագետ՝ 80.000 II-րդ կարգի մասնագետ՝ 60.000 III-րդ կարգի մասնագետ՝ 40.000

2	Մայիսի 15 Հունիսի 15	18.30 11.00	«Մեքենամեխանիզմների տեղակայման և շահագործման պահանջները շինհրապարակներում»	Գեորգի Կակոյան	«Ինստրուկտարիում» ՍՊԸ, Արցախի փ.6/5	I-ին կարգի մասնագետին շնորհվելու է 20 կրեդիտ, II-րդ կարգի մասնագետին շնորհվելու է 15 կերդիտ, III-րդ կարգի մասնագետին շնորհվելու է 10 կրեդիտ	I կարգի մասնագետ, II կարգի մասնագետ, III կարգի մասնագետ 01-25, 31-32 մասնագիտություններ	I-ին կարգի մասնագետ՝ 80.000 II-րդ կարգի մասնագետ՝ 60.000 III-րդ կարգի մասնագետ՝ 40.000